

Հայերը հակայ, ուժեղ ու սրտատուղ մարդուն կ'անուանեն Գալլ—Վիշապ . բնթերցողները կը յիշեն որ Մարերէ առաջ եկած Մուրացան նախարարութիւնը կը կոչուէր Վիշապագունք՝ (վիշապներու սերունդ) : (\*)

Մենք չպէտք է կարծենք որ Քիւրդերը իրենց հոգերանական զարգացումն հինին մէջ անուցած և նմանցուցած ուղիւ լով կենդանականի՝ ստորացած դիրք մը կը ներկայացնեն . բնդհակառակն, իրենց զրականութիւնը ցոյց առւած են անոնք, երբ նկատի առնենք նախնական մարդու կենդանականութիւնը, յետոյ զազանականութեան մօտենայու իղէպը, որ մինչև ցարդ կը պահեն ռազմիկ պետութիւններէ շատերը, իրենց զինանշանները խորհրդաւորութեամբ մը պատկերացնելով առիւծ, վագր, ևն . :

Ահա ցեղական բարքեր, ժառանգական յատկութիւններ, միջավայրի ազդեցութիւնը, բաղդատական համամատութիւններ արձանադրութիւններու, վիպական պատմութիւններու, հին ու նոր բնաւորութիւններու, և ասոնք բաւական են բնորոշելու համար ինչ որ ըսինք, և ինչ որ ուղեցինք ըսել :

ՀԻՆ ՔԻԻՐՊԵՐԷ ԿՐՕՆԻ, ԼԵԶՈՒԻ, ԱՐՈՒԵՍՏԻ  
ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՅԺՄԵԱՅ ՔԻԻՐՊԵՐՈՒՆ

Երբ կ'ուզենք հասկնալ թէ ի՞նչպէս է կազմուած Քիւրդ ցեղի հոգին, պէտք է որոնելու երևենք այն հոգերանական երևոյթները որ ունեցել են իրենց նախնիները՝ զլիսաւորապէս

---

(\*) Ալիշանը կ'ըսէ. Հին Հայկազանց ազգային դրօշը կամ նշանն էր Վիշապ . և Մարաց առասպելեալ թագաւորի երազին մէջ մեր Տիգրանը Վիշապի վրայ հեծած կ'երևար : Վիշապը պլաբանութիւնն է Մարերու, որոնց թագաւորը Աժգահակ՝ կը նշանակէ օձ խայթող :

(Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց)